ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 336-Ա 08 հուլիսի 2024 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՐԱՔՍՅԱ ՂԱՐԱԲԱՂՅՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ և 163-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման 1-ին կետի պահանջներն ու Գայանե Մկրտչյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Ա. Իսահակյանի անվան N 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գայանե Մկրտչյանին տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործված մասը՝ 2024 թվականի հուլիսի 11-ից 2024 թվականի հուլիսի 24-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Ա. Իսահակյանի անվան N 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գայանե Մկրտչյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի լիազորությունների և պարտականությունների

կատարումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Ա. Իսահակյանի անվան N 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Արաքսյա Ղարաբաղցյանին (առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

08.07.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ